

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2018թ. նոյեմբերի 29-ի նիստի

(արձ. N6)

1. Հաստատել և գործողության մեջ դնել՝

1.1 ԵԹԿՊԻ-ի գիտահետազոտական գործունեության ծրագիրը,

1.2 ԵԹԿՊԻ-ի աշխատողների գործուղումների ձևակերպման կանոնակարգը:

1.3 ԵԹԿՊԻ-ի էթիկայի կանոնակարգը:

2. Հաստատել ԵԹԿՊԻ-ի բակալավրի կրթական ծրագրով ներքոհիշյալ մասնագիտությունների (ՄԿԾ-ների) 2019թ. ընդունելության ծրագրերն ու գնահատման չափանիշները՝

1.Թատերական արվեստ

1.1 Դերասանական արվեստ

1.2. Ռեժիսուրա

2. Կինոարվեստ

2.1 Կինոարվեստ

3. Տեսալսողական արվեստ

3.1 Օպերատորություն

4. Պարարվեստի ռեժիսուրա

4.1 Պարարվեստի ռեժիսուրա

5. Կատարողական արվեստ

5.1 Պարարվեստ

6. Կերպարվեստ

6.1 Թատրոնի, կինոյի և հեռուստաուլորտի նկարչություն

7. Արվեստի տեսություն և պատմություն

7.1 Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում

7.2 Թատերագիտություն

7.3 Կինոգիտություն

7.4 Սցենարադրամատուրգիական արվեստ

3. Ատեստավորել ԵԹԿՊԻ-ի հեռակա ուսուցման ասպիրանտ Անի Լիպարիտի Տեր-Հովհաննիսյանին,

3.1 հիմք ընդունելով 2017-2018 ուս. տարվա համար աշխատանքային պլանով և հետազոտողի կրթական ծրագրով նախատեսված աշխատանքների կատարումը՝ Անի Տեր-հովհաննիսյանին փոխադրել ուսումնառության 4-րդ տարի:

3.2 Ուսումնառության ժամկետն ավարտվելու կապակցությամբ դադարեցնել հեռակա ուսուցման 4-րդ կուրսի ասպիրանտ Արթուր Տիգրանի Վարդիկյանի ուսումնառությունը,

3.3 հիմք ընդունելով Արվեստի պատմության և տեսության ամբիոնի դրական եզրակացությունը՝ Ա. Վարդիկյանի «Արտավազդ Փելեշյանի կինոպոետիկան» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել պաշտպանության:

4. Հիմք ընդունելով Արվեստի պատմության և տեսության ամբիոնի դրական եզրակացությունը՝ Ռուզաննա Գարիկի Առաքելյանին ս.թ. դեկտեմբերի 3-ից հրամանագրել որպես հայցորդ՝ արվեստագիտության բնագավառի ԺԷ.00.01 «Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն» մասնագիտության գծով և կցել Արվեստի պատմության և տեսության ամբիոնին:

Ուսուցումը կազմակերպել վճարովի հիմունքներով: Ուսման տարեկան վարձավճար սահմանել 90 000 (իննսուն հազար) ՀՀ դրամ,

4.1 հաստատել արվեստագիտության բնագավառի ԺԷ.00.01 «Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն» մասնագիտության հայցորդ Ռուզաննա Գարիկի Առաքելյանի թեկնածուական ատենախոսության թեման «Հրաչյա Ղափլանյանի ռեժիսուրան և Երևանի դրամատիկական թատրոնը» վերնագրով և աշխատանքային պլանը,

4.2 արվեստագիտության բնագավառի ԺԷ.00.01 «Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն» մասնագիտության հայցորդ Ռուզաննա Առաքելյանի «Հրաչյա Ղափլանյանի ռեժիսուրան և Երևանի դրամատիկական թատրոնը» վերնագրով թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար նշանակել ԱԳԴ, պրոֆեսոր Հենրիկ Վահանի Հովհաննիսյանին՝ 5 տարով, հատկացնել տարեկան 30 ժամ և արտաբյուջեի հաշվից վճարել տարեկան 30 000 դրամ մինչև 2023թ. դեկտեմբերի 3-ը:

5. Ուժը կորցրած ճանաչել նախկինում հաստատված ԵԹԿՊԻ ՊՈԱԿ-ի կառուցվածքը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը,

5.1 հաստատել և ս.թ. դեկտեմբերի 3-ից գործողության մեջ դնել ԵԹԿՊԻ ՊՈԱԿ-ի նոր կառուցվածքը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերն՝ ըստ հավելված 1,2,3-ի:

6. Արձանագրել,որ դոցենտի գիտական կոչում շնորհելու նպատակով կազմակերպված փակ, գաղտնի քվեարկությունն ընթացել է սահմանված կարգով և ընթացակարգի խախտումներ չեն գրանցվել,

6.1 հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը,

6.2 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա ՀՀ գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի 5-րդ կետի բ) ենթակետի համաձայն Նարինե Էդիկի Բերոյանին ձայների մեծամասնությամբ (29 կողմ, 1 դեմ, 1 անվավեր) շնորհել դոցենտի գիտական կոչում ԺԷ.00.01 «Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն» մասնագիտությամբ և խնդրել ՀՀ ԲՈԿ-ին հաստատել Գիտական խորհրդի որոշումը:

7. Հանձնարարել դեկաններին առաջիկա շաբաթվա ընթացքում քննարկման ներկայացնել դասացուցակի նոր նախագիծը:

Գիտքարտուղար

Գ.Հովհաննիսյան